

ԾԱՂԻԿ ԿԵ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԻ ՕՐԵՐԸ: — Հա-
տը 40 փարա:

Բաժանորդագրին ԿԱՆԻՍԻԿ — Պոլսոյ համար տարե-
կան 45 դրշ: Վեցամսեայ 23 դրշ: եռամսեայ 12 դրշ: —
Գաւառացի համար տարեկան 50 դրշ: Վեցամսեայ 26
դրշ: եռամսեայ 14 դրշ:

Ռուսիոյ համար տարեկան հինգ ռուբլի: Ուրիշ եր-
կիրներու համար 12 ֆրանք:

Գաւառներէն դրոշմաւորութիւն կ'ընդունուի:
Միայն երեք թիւ ապառիկ կը զրկուի: Երկու հետեւ
բաժանորդագրին չը վճարողը կը դադարի թերթ ընդու-
նելէ:

Ծանուցման տողը 2 դրշ:

40 փարա

ԾԱՂԻԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ԾԱՂԻԿ Ի Վերաբերեալ ամէն գործի համար պէտք է
դիմել:

Առ Տնօրէն-Հրատարակիչ ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱՍՏԱՉԻԱՆ
Պոլիս, Էսկի-Չաբիէ, Պէրպէրեան Տպարան

درعليه ده اسكي ضبطه زقاغده برريان مطبعه سنده
بالا قاشيان حوونان

HOVNAN PALACACHIAN

Rue Esski-Zabtié, Imprimerie N. Bérbérian
CONSTANTINOPLE

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Ա. ՏԱՐԻ. ԹԻՒ 23

ՇԱԲԱԹ

16 ՓԵՏՐՎԱՐ 1891

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԹՇՆԱՄԱՆՔ

«Ծաղիկ»ի ծրագրոյն շրջանակէն դուրս
չ'է նաեւ քննադատական եւ գրադատա-
կան յօդուածոց հրատարակութիւնն,
ինչպէս յայտնի էր ի սկզբան անդ մեր
առանձինն հրատարակած յայտարարու-
թեանէն եւ լրագրոյս Ա. թուոյն ճակատը
իրեւ կանխաբան գրուած երկու հոսիքն:

Ըստ այսմ, նոր հրատարակեալ Մար-
գարեան աշխարհագրութեան սխալները մատ-
նանիչ ընող գրադատական յօդուածներ
յղուեցան մեզ՝ հրատարակելու խնդրա-
նօք, եւ մեք պարտաւորութիւն համարե-
ցինք թէ՛ ոչ ամէնք, գէթ երկու հատն,
ամէնէն աւելի հակիրճ եւ մեղմորէն գըր-
ուածներն հրատարակել, եւ հրատարա-
կեցինք: Մեր հրատարակած Գրադատա-
կաններ՝ Մարգարեան Աշխարհագրութեան
սխալներէն մի քանի հատը միայն մատ-
նանիչ կ'ընէին պատշաճութեան սահմա-
նին մէջ, եւ ամենեւին չ'էին պարունա-
կեր անձնական թշնամանք:

Բայց ահա՛ Մարգարեան Գրիգոր Է-
ֆէնտի, փոխանակ իւր սխալ ցոյց տըր-
ուած կէտերուն սխալ չը լինելը լրջօրէն
հաստատելու, խնդիրն անձնականութեան
կը վերածէ ու կը գրէ:

«Ընթերցող հասարակութիւնն իրաւամբ
պիտի հարցնէ թէ՛ 25-30 տարիներէ ի վեր
առաջին անգամն է որ հրապարակի վրայ Աշ-
խարհագրութեան դասագիրք կ'երեւի, բնա-
պէս պիտի հետաքրքրի թէ՛ ցարգ հրատա-
րակուած աշխարհագրութիւնք՝ անսխալութեան
գրոշմ կը կրէին եւ կամ իրենց կատա-
րելութեամբ եւ կամ աննման մեթոտին հա-
մար՝ Ակադէմիկներու կողմանէ ոսկեայ մի-
տալներով էին արժանացած, որոց մասին
ցարգ եւ ոչ մէկ տող քննադատութիւն, մին-
չեւ իսկ ամենապարզ դիտողութիւն մ'անգամ
չընելով անխտիր եւ առաւել քան զչափն վը-
ճարելով կը գործածուէին մեր վարժարանաց
մէջ: Բայց երբ, Մարգարեանն ալ—սխալե-
լով— աշխարհագրութեան դասագիրք մը
հրատարակելու աններելի անխոհմտութիւնը
կը գործէ, ահա տեղական մի շարքաթերթ-
քննադատներու բանակ կազմակերպելով իւր
դէմ կ'ելլէ, ուխտելով յաւիտենական պայ-
քար մղել եւ ... անձնականութեան հետ խա-
ղալու չափ յառաջ երթալ:

«Այս անօրինակ հանելուկը լուծելու հա-
մար կը բաւէ ուշադիր ակնարկ մը ձգել թէ
այդ քննադատութիւնք ինչ աղբիւրներէ ծա-
գած եւ անձնական ինչ գծու հաշիւներու վը-
րայ ձեւուած են:»

Քննադատութիւնը յառաջադիմու-
թեան զօրաւոր խթան մը համարելով,

ինչպէս որ կը յարգեմք օրինաւոր քննա-
դատութեան ազատութիւնը, խղճի
պարտք կը համարիմք յարգել նաեւ քննա-
դատելոյն ինքնապաշտպանութեան բնա-
կան իրաւունքը: ուստի եւ «Ծաղիկ»ի է-
ջերն սիրայօժար պիտի բանայինք նաեւ
Մարգարեան Էֆէնտիի առջեւ, եթէ ու-
ղէր օրինաւորութեան սահմանին մէջ պա-
տասխանել: Բայց ահա՛ Մարգարեան Էֆ-
ուրիշ թերթի կը դիմէ, եւ չը բաւականա-
նալով մատնանիչ եղած սխալներուն ամէ-
նէն անկարեւորները խճրճել եւ երկրոր-
դական ու վիճաբանութեան նիւթին հետ
առնչութիւն չ'ունեցող մասանց վրայ
ժանրանալ, «Ծաղիկ»ը թշնամանելու չափ
յառաջ կ'երթայ՝ հանելուկ եւ անձնական
գծու հաշիւներ տեսնելով՝ այս մասին լը-
րագրոյս բռնած ընթացքին մէջ:

Քննադատողներէն Պատմաճեան Էֆէն-
տի կրնայ իւր մասին փակել վիճաբանու-
թիւնը, «Ծաղիկ»ի վերջին թուով ըրած
բանաւոր առաջարկութեան համաձայն՝
կարող մասնագիտաց քննութեան յանձ-
նելով Մարգարեան Աշխարհագրութիւնը
եւ 5 ոսկի դնելով ի նպաստ Ազգ. Հիւան-
դանոցի: Այս առաջարկութիւն արգելք
մը չէ «Ծաղիկ»ի համար բացատրելու
Մարգարեան Էֆէնտիի երեւակայած հա-
նելուկը:

25-30 տարիէ ի վեր հրատարակեալ
Աշխարհագրութեան դասագրքերուն եւ
ոչ մէկն է քննադատուել: աստի Մար-
գարեան Էֆ. կը քաջալերուի հրատարա-
կելու իւր Աշխարհագրութիւնը եւ ամե-
նեւին չը մտաբերեր իսկ քննադատեալ
տեսնել զայն: Բայց «Ծաղիկ» այս անը-
ման Գաւառի վրէժէ՛մ քննադատութիւն
հրատարակելու ամբարշտութիւնը կը գոր-
ծէ: Ամէն հաշիւէ դուրս էր այս. Աշ-
խարհագրութեան դասագիրք քննադա-
տել, եղած բա՞ն է այս... հանելուկ:

Միայն Աշխարհագրութեան դասա-
գրքերու համար չ'է. ընդհանրապէս առ-
նելով, տեղական լրագիրք ցարգ սովո-
րութիւն ըրած չ'են հրատարակեալ գըր-
քերու վրայ գրադատականներ գրել: Մա-
նաւանդ 25-30 տարիէ ի վեր հրատարա-
կեալ Աշխարհագրութեան դասագրքեանք
կրնան անուշադիր մնացած, եւ հետե-
ւաբար չը քննադատուած լինել: Եթէ
Մարգարեան Աշխարհագրութիւնը ու-
շագրութիւն գրաւեց եւ քննադատուե-
ցաւ, պատճառը՝ օրաթերթերու մէջ
հրատարակեալ մեծադուրդ յայտա-
րարութիւններն էին: Ի՞նչպէս ուշագ-

րութիւն չը գրաւէր, երբ կը յայտարար-
ուէր թէ հեղինակը «պատմութեան եւ
աշխարհագրութեան ուսուցիչ» է, «Ազ-
գային առաջնակարգ մասնագէտներէն»
է, թէ՛ գործն «արգի մանկավարժական
մեթոտներու լիովին համաձայն եւ մեր
կրթական վիճակին գործնական փորձա-
ռութեան վրայ հիմնուած» է, թէ՛ այս
դասագիրք «ցարգ գտնուած աշխարհա-
գրութեան դասագրքոց բաղդատմամբ» ա-
ւելի դիւրուսոյց եւ հաճոյալի է, «ոճը
պարզ եւ մանաւանդ ճոխացեալ նորանոր
ժանօթութիւններով եւ գործնական հը-
րահանգներով», թէ՛ «Օսմանեան Պը-
տութիւնն աւելի ընդարձակ, աւելի խը-
նամուլ եւ մանրամասն կերպիւ նկարագ-
րուած է», թէ՛ պատրաստուած է «ի
պէտս Ազգ. Բարձրագոյն Նախարարա-
նաց», թէ՛ «վաւերացեալ է յԱսորի-
Խորհրդոյ Ազգ. Կեդր. վարչութեան»,
եւ թէ՛ վերջապէս եւ հետեւաբար «կուգայ
մեր դպրոցական դասագրքոց շարքին մէջ
կարեւոր դիրք մը գրաւել»:

Յայտարարութեան այս ձեւն իսկ կը
բաւէր՝ ամէնուն հետաքրքրութիւնը շար-
ժեւելու եւ ուշադրութիւնը գրաւելու գըր-
քին վրայ, քննելու դայն եւ թելադրելու
զոմանս՝ հրապարակի վրայ դնելու այս
նոր Աշխարհագրութեան թերութիւննե-
րը, հանդէպ գրքին շլացուցիչ յայտարա-
րութեանց եւ հանդէպ Արեւելի խմբագ-
րականին մէջ իրեւ աննման ինչ յիշատա-
կուելու համար արժանացած պատուոյն:
Ահաւասիկ լուծումն հանելուկին:

Լուծելու հանելուկ առաջարկելով
մեզ, Գրադատականներ հրատարակուե-
լուն մէջ անձնական գծու հաշիւներ երե-
ւակայելով, «Ծաղիկ»ի տպարանը գալով
եւ դատ բանալու սպառնալիք ընելով՝
Մարգարեան Էֆ. երբէք չ'արդարանար
հանդէպ իւր Աշխարհագրութեան պա-
րունակած անթիւ անհամար սխալներուն:
Տէրութեան դատարանաց դռները բաց
են, թո՛ղ հրամմէ. բայց մի եւնոյն ժա-
մանակ հրապարակի վրայ ալ օրինաւորու-
թեան ու պատշաճութեան սահմանին մէջ
թո՛ղ հերքէ իրեն գրքին դէմ եղած քն-
նադատութիւնները, եւ ոչ թէ թշնամա-
նէ: Թո՛ղ ըսէ մեզ, օրինակի համար, թէ
ինչ խղճով եւ ի՞նչ համարձակութեամբ
Լուսաւորչական եկեղեցի (էջ 18) շինծու
անուամբ կը մկրտէ Հայոց եկեղեցին:
Թո՛ղ ըսէ մեզ թէ Փարիզի մէջ է վեր-
սայլի պալատը (էջ 56), Աշտիշատի
մէջ է Ս. Մեսրոպայ գերեզմանը (էջ

189), Ակնայ բոլորովին է «Հռոմիկայ ուր կը գտնուի Ս. Ներսէս Շնորհալուց գերեզմանը», իսկ տալիս տիկեարի կուսակալութիւնը երեք նահանգներէ կը բաղկանայ թէ՛ արդէն քանի մը տարիներ անցած են հինգ նահանգներու բաժնուելէ ի վեր. թէ՛ երկու հատ Սամսոն կայ, մին Գասթեմունի կուսակալութեան մէջ (էջ 184) և միւսը՝ Տրապիզունի կուսակալութեան մէջ (էջ 185). Սեւ ծովուն եզերաց Թիբեպոլուն Թարապուլուս ալ կը կոչուի. Խարբերդ՝ Բաղէշի կուսակալութեան մէջ գաւառն է (էջ 189) թէ՛ առանձին կուսակալութիւն է (էջ 190). և այլն, և այլն, և այլն:

Երբ այսօրինակ կարեւոր հարցմանց չպատասխանեալ Մարգարեան էֆէնտի, այլ միայն կը թշնամանէ՝ անձնական զբաղում հաշիւներ վերադրելով «Ծաղիկ»ի, ուրիշ բան ըրած չը լինիր, այլ արդարացուցած իւր գրքին դէմ եղած քննադատութիւնները:

ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

(Շար. 19րդ բուէն)

4.

Ս. Պատարագի Խորհրդոյ վարդապետութիւնն երկու էական կէտեր կը պարունակէ. նախ՝ թէ մեր եկեղեցւոյ կատարած Պատարագն ի՞նչ միտքով ըմբռնելու է, և երկրորդ՝ թէ ի՞նչպէս հասկնալու է Քրիստոսի Մարմնոյ և Արեան ճաշակումն Ս. Հաղորդութեան մէջ. ի վերոյ տեսանք որ Քրիստոսէն յառաջ եղած բոլոր զոհերն ու պատարագներն ըստ ինքեանց իրականութիւն կամ իսկութիւն չունէին. նոքա լոկ ստուեր և նախատիպ օրինակ էին միոյ միայնոյ պատարագին Սաշի, և միայն Քրիստոսի զոհին տկնարկելով և նորա տիպն լինելով՝ Աստուծոյ հաճելի էին. ի լրումն ժամանակի անհամար ազգաց բաղձանքն կատարեցաւ, անարատ աստուածային Գառն զնաւ ի վերայ Սաշին, աշխարհիս փրկութեան մեծ Պատարագն մատուցաւ և զմարդկային ազգն Ագամային անէծքէն և դատապարտութենէն միանգամ ընդ միշտ ազատեց: Յետ այնորիկ բոլոր ուրիշ զոհերն ու պատարագներ, թէ՛ Մովսիսական և թէ՛ կուսակալական, անգոր և ասարդիւն կը մնան, քանզի «ստուերն ի լոյս ճշմարտեցաւ»: Սաշի պատարագէն դուրս ու է ուրիշ պատարագ ոչ օգտակար կրնայ լինել մեզ համար և ոչ ընդունելի Աստուծոյ: Ապա, կ'հարցուի, ի՞նչ է այդ որ քրիստոնէից եկեղեցիք միշտ կը կատարեն Պատարագ անունով: Քրիստոնէից Պատարագն ոչ այլ ինչ է ըստ եթէ Սաշի պատարագի ընծայումն և յիշատակութիւնն, ոչ թէ նորա կրկնումն որ անհնար է, այլ ինչպէս առաջ ըստեցաւ, Քրիստոսի փրկագործութեան արդեանց իւրացումն էր զոր Փրկիչն ինքն հաստատեց անմիջապէս իւր չարչարանքէն յառաջ՝ ասելով. «Զայս արսաւիք սա իմոյ յիշատակի», որ ըստ Յունական բնագործ ոճոյ կը նշանակէ. «Ասիկա (այսինքն հաց ու գինին օրհնելն և նուիրելն) մատուցանէք իբրեւ պատարագ և այդու իմ

չարչարանաց և մահուան յիշատակն ընէք առաջի Աստուծոյ»: Այսինքն երբոր ուղիղ դիտաւորութեամբ Քրիստոսի հաստատութեան արտասանած խօսքերը (Առէք կերէք, Արեք ի սմանէ) խօսինք, հրաշալի և գերբնական և հետեւաբար անասելի և անբացատրելի կերպով՝ հաց ու գինին իւր փառաւորեալ Մարմին ու Արիւնը կը լինին, այն Մարմինը զոր Քրիստոս միանգամ ընդ միշտ մատուց ի վերայ Սաշին, և այժմ ի յերկինս իբրեւ մշտնջենաւոր քահանայապետ չարունակաբար կը մատուցանէ մինչև յաւիտեանս ժամանակաց: Եւ յետոյ այս հրաշալի կերպով սրբագործեալ և ի Մարմին և յԱրիւն Քրիստոսի փոխարկեալ հաց ու գինին մատուցանելով առ Աստուած, մենք ևս կը միանամք մեր աստուածային քահանայապետին հետ ի մատուցումն այն իւր մշտնջենական պատարագին, որպէս զի մենք ևս գործով և մասնակցութեամբ ցոյց տանք թէ, իրօք փափաքող ենք Քրիստոսի փրկագործութեան արդիւնքը վայելելու, և միանգամայն գոհութիւն տանք այն մեծ պատարագի համար որով մենք փրկուեցանք: Այս է պատճառն որ առ Յոյնս միշտ և առ մեզ երբեմն այս Ս. Խորհուրդն՝ Գոհութիւն (Եւսարիստիա) կը կոչուի:

Երկրորդ կէտի վերայ ևս մի քանի խօսք ունիմք: Չենք անգիտանար որ հարիւրաւոր տարիներէ հետէ սաստիկ վիճարանութիւններ տեղի ունեցած են Ս. Հաղորդութեան վարդապետութեան վերայ, և արեւմտեան մեծ հերձման (Բողոքականութեան) գլխաւոր պատճառներէն մին ևս այս էր: Առանց այդ ցաւալի և ապարդիւն վիճարանութեանց մէջ մտնելու այս տեղ, կը բաւէ ասել թէ այլաբանաբար ոմանք մեծամեծ սխալութիւններ գործեցին Սուրբ Գրոց պարզ խօսքերէն դուրս գնալով և փրկութեան ճանձնով՝ սոսկ մարդկային մտաց հասկացողութեամբ բացատրել ուղեկալով: Այս վարդապետութեան հիմն է Քրիստոսի խօսքերն թէ՛ «Այս է Մարմին իմ, այս է Արիւն իմ»: և քանզի Քրիստոս է աստղն, մեք այլ եւս իրաւունք չունինք հարցնելու թէ հացն ու գինին ի՞նչպէս կրնայ Մարմին և Արիւն դառնալ, ոչ ևս իրաւունք ունիմք փրկութեան ճանձնով բացատրել թէ ի՞նչպէս հացի և գինոյ գոյութիւնը կը փոխուի: Այս երկուքն ևս ծայրայեղութիւններ են՝ Ս. Գրոց սահմանէն բոլորովին դուրս, և ոչինչ նուազ քան թէ թերահաւատութիւն և ամպարչտութիւն, և Հայաստանեայց եկեղեցին ոչ պաշտօնապէս և ոչ անպաշտօն կերպիւր բնաւ փորձած չէ Քրիստոսի բանից սահմանէն դուրս ելնել՝ երկմտելով կամ փրկութեան ճանձնէն բացատրելով այն ինչ որ անմեկնելի խորհուրդ է, և խորհուրդ լինելէ կը դադրի երբ փրկութեան ճանձնով զոհեալ զինքն կը լինին գերբնական գործութեամբ և անըկարագրելի կերպիւր, ըստ խոստման Տեառն, իրական Մարմին և Արիւն Քրիստոսի, և արժանաւորաբար ճաշակողք ոչ այլ ինչ ճաշակած կը լինին քան թէ զՄարմին և զԱրիւն Տեառն, իսկ անարժանաբար ճաշակողներն այդ Սրբութեանէ՝ Քրիստոսի Մարմինն և Արիւնը չը ճաշակելն զատ, մեծ մեղաց և դատապարտութեան տակ ալ կ'լինան: Զառիս սահմանը չը ներեր մեզ որ աւելի երկարենք մեր դիտողութիւններն. առ այժմ կը բաւէ յանձնարարել ընթերցողաց որ ուշադրութեամբ կարդան Ա. Կորնթ. ԺԱ. 23-29, յո-

րում պիտի գտնեն այնքան բացատրութիւն որքան հնար է և պէտք է տալ այս աստուածային Խորհրդոյ վերայ: Եթէ ասկէ աւելի փրկութեան ճանձնով բացատրութեան պէտք լինէր, Ս. Առաքեալն այդ ճիւղին մէջ ևս աւելի հմուտ էր քան թէ Միջին դարու Դոկտրինացիները (Scholastici) կամ Տրիդենտեան ժողովականք, և քան թէ իւրեանց հակառակորդք:

5.

Այսպիսի վարդապետութեան վերայ հիմնեալ Քրիստոսի եկեղեցին Առաքելոց ժամանակէն ի վեր Պատարագի արարողութիւնն իւր հասարակաց աղօթից ամենէն էական մասն և կեդրոնը նկատած է: Որքան որ ալ ժամանակի, ազգութեան, լեզուի և բնակութեան պարագայներն իւրաքանչիւր ազգային եկեղեցւոյ տարբեր ուղղութիւն և զարգացում առած լինին, այնու հանդերձ զարմանալի է թէ Պատարագի արարողութեանց մէջ որքան միակերպութիւն կը տիրէ բոլոր քրիստոնէական եկեղեցեաց մէջ, թէ՛ արեւելեան և թէ՛ արեւմտեան: Սորա պատճառն այն է որ Առաքելոց ժամանակ իսկ այդ արարողութեան գլխաւոր մասերն նոյն էին որպէս այժմ, ինչպէս ըստ բաւականին յայտնի է ի Գործոց Առաքելոց և յԱռաքելական թղթոց: Եւ երբոր երկրորդ դարու սկիզբն ապրող Յուստինոս Վկայի նկարագրութիւնը կը կարդանք, կը տեսնենք որ մեր ԱՅԲԴ դարու Ս. Պատարագի Խորհրդոյ կատարումն էական կէտերու մէջ բնաւ չը տարբերի Յուստինոսի ժամանակի կատարումն, և տարբերութիւնը միայն երկրորդական (ազգային և տեղային պարագայներէ յառաջ եկեալ) բաներու մէջ են: Եւ այս տեղային և ազգային հանգամանքները պատճառ եղած են իւրաքանչիւր ազգային եկեղեցւոյ Պատարագի առաւել կամ նուազ տարբեր կերպիւր զարգանալուն: Ըստ այսմ գլխաւորապէս կը տարբերին իրարմէ արեւելեան և արեւմտեան ծէսը, որոցմէ արեւմտեան ծիւղի վերայ խօսելն մեր ներկայ նպատակէն դուրս է, իսկ արեւելեան ծէսերը հինգ ծիւղերու կը բաժնուին, որք են (Ա) Ս. Յակովբայ, (Բ) Կլեմենտեան, (Գ) Ս. Մարկոսի, (Դ) Ս. Բարսեղի և (Ե) Ս. Ոսկերեանի ծէսը: Բոլոր արեւելեան եկեղեցիք (Յոյնք, Հայք, Ասորիք, Ղպտիք, Հայկէջք և այլն) այս ծէսերէն մին կամ միւսն կամ մի քանիսն կամ ասոնցմէ առանձին հինն ու նշանաւորն է Ս. Յակովբայ ծէսն, որ անյիշատակ ժամանակներէ ի վեր երուսաղէմի մէջ գործ կ'ածուէր, և որոյ կազմութեան առաջին հեղինակն կը համարուի Տեառն Եղբայր Ս. Յակովբն որ նոյն քաղաքի առաջին եպիսկոպոսն էր: Մեր եկեղեցւոյ Պատարագի հիմն ու նախադաշտարն եղած է Ս. Յակովբայ այս Պատարագամատոյցն, թէպէտ Ոսկերեանի ծիսարանէն եւս մի քանի բաներ առնուած են և ազգային սրբոց կողմէ եւս մի քանի յաւելումներ ստացած է: Այս տարբերութեանց և նմանութեանց, յաւելմանց և փոփոխմանց վերայ հետզհետէ իւրաքանչիւր մասին բացատրութեան մէջ կը խօսինք:

(Շարունակելի)

ԹՈՐՈՍ Տ. Ի. ԶՈՒՂԱՅԵՅԻ

Վարձապէս Աստուածաբանութեան

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Առողջաբանական կարեւոր ու գլխաւոր խնդիրներէն մին է ամուսնութիւնն որ պարտի լինել ըստ խորհրդոյ բժշկաց, զի ինչպէս յարմար ու բանաւոր ամուսնութիւն ապագայ երջանկութեան նախադասութիւն է, նոյնպէս անպատշաճ և անտեղի միութիւն՝ այլ և այլ հիւանդութեանց, աղետից ու տառապանաց սկիզբն է։ Հիմա պիտի առարկուի թէ բժիշկը ինչպէ՞ս կրնան խորհուրդ տալ երբ իրենց դիմուի։ Այս առարկութիւն խիստ ճշմարիտ է։ արդարեւ չէ հնար ընտանեկան այսպիսի փափուկ խնդրոց միջամտել՝ առանց նախապէս ծանօթ լինելու ապագայ ամուսնացեալոց նախնիքն վիճակին, ի վաղուց անտի ընտանեաց հետ յարաբերութիւն ունեցած լինելու, ի մի բան առանց տան բժիշկ լինելու։

Եթէ բժիշկն ամուսնութեան արգելիչ պատճառ մը նշմարէ, ընտանեաց յայտնելու քաջութիւն ունենալու է։ մինչև իսկ եթէ իւր խորհրդոց չանսան, դարձեալ հոգ չէ, վասն զի երբ ապագայի մէջ իր գուշակութիւնը կատարուին, իւր արժանիքն ալ աւելի կը բարձրանայ և յետ այնորիկ ընտանեաց վստահութիւնն կը գրաւէ։ վերջապէս եթէ իւր խորհուրդը անօգուտ մնացին մէկ դէպքի մէջ, անտարակոյս օգտակար կը լինին ուրիշ առիթներու մէջ, բայց ի՞նչ ըսելու է այն բժշկաց՝ որ հակառակ իրենց խղճի և առողջապահական կանոնաց խորհուրդ տալու նշանատու թիւնը կ'ունենան...

Թուենք այժմ մի առ մի աղջկան և մանչու կողմանէ ամուսնութեան արգելիչ պատճառներն։

Աղջկան կողմէն բժիշկն անհանգիստ ընող պատճառներէն առաջինն է կազմի թերութիւն, քանզի այս վիճակի մէջ ամուսնութիւն չէ հնար արգելանաւոր լինել, բայց եթէ իրեն եւ զաւակին համար վտանգալից գործողութեանց միջոցաւ։

Կազմի թերութիւնն ճանչնալ կարծուածին չափ դիւրին բան չէ, ըստ որում երբեմն կոնքի (bassin) մինչև իսկ չափազանց տճեւութիւններն արտաքուստ աննշմարելի կը լինին։ հետեւաբար խիստ տճեւ կոնք ունեցող աղջիկ մը բարեձեւ կրնայ երեւիլ։ այսպիսի պարագայներու մէջ նախ և առաջ պէտք է գիտնալ աղջկան ուշ կամ կանուխ քաւելու սկսիլն, նոյնպէս պէտք է տեղեկանալ տղայութեան և չափահասութեան միջոցին անցուցած հիւանդութեանց՝ որք կրնան կերպիւ մը լոյս սփռել, և յետոյ դիտելու է թէ կազմի թերութիւն ունի՞, հետեւաբար կոնքի անբնական զարգացում կայ։

Կոնքը կը լինի կամ լայն եւ կամ նեղ, եթէ լայն լինի, աղջկան երեսն լայն ու տափակ, նոյնպէս կուրծքը խիստ լայն եւ քիչ շատ առեւէն ու ետեւէն տափակցած, հետեւաբար ուսերն իրարմէ խիստ հեռացած, հասակն առհասարակ կարճ, ձեռքերն ու ոտքերը խիստ խոշոր կը լինին և մասնաւոր քաղցրածք մ'ունի որ կը նմանի բադի քաղցրածքին։

Ընդհակառակն երբ կոնքը նեղ է, ակտանիշերն աւելի բազմաթիւ են, բայց ոչ այնքան յայտնի։ տիրող պնդասիրութեան եւ սեթեթեմից աղաքաւ յիշեալ թերութիւն գրեթէ բոլորովին աննշմարելի կը դառնայ։ այսպիսի աղջկանք մասնաւոր կերպարանք մ'ունին զոր քիչ մը վարժութեամբ կարելի է

սովորիլ, բայց բացառել զժուար է։ արդարեւ այդպիսեաց երեսն մասնաւոր կերպ մը ցոյց չտար այլեայլ մասերուն վրայ, բայց ամբողջութեանը մէջ անհերքաշնակութիւն կայ։ ճիշդ միևնոյն կերպարանքն է որ կը տեսնուի կուզերու (գամպուր) վրայ։ Պ. Բաթօ հետեւեալ օրինակն մէջ կը բերէ բազմաթիւնն աւելի զգալի ընելու համար։ բազմահմուտ ուսուցիչն կ'ըսէ թէ մէկ պարիկի մէջ դնելով շատ մը մարդիկ՝ որոց գլուխներն եւ եթ տեսնուին, թէ որ անոնց մէջ սապատող մը գտնուի, անմիջապէս երեսն յայտնի կը լինի, որ շատ ճիշդ է։ սոյն ճարտար բազմաթիւն ի վեր կը հանէ կոնքի նեղութիւնը։ բայց աստի հասակին ընդհանրապէս կարճ է, փորերնին համեմատաբար խոշոր, քաղցածքնին գրեթէ բնական, ուշ ոտք ելած են ի տղայութեան, ընդհանրապէս սրունքնին քիչ շատ ծուռ է, ոտքերնին ու ձեռքերնին պղծտիկ, մատերնին բարակ ու կարճ։

Նշական յատկութիւն մ'ալ այս է թէ մարմնոյ վերին մասն աւելի զարգացեալ է բազմաթիւն ստորին մասին, և ահա այս պատճառաւ է թէ այդպիսեաց հասակն նստած ատեննին աւելի վայելուչ կ'երեւայ, իսկ երբ ոտքի ելնեն, կարճահասակ ըլլալին յերեւան կ'երևնէ։ Վերոյիշեալը շատ խելացի կը լինին սապատող և տճեւ մարդոց պէս։

Ասկից զատ, կան նաև մի քանի պատճառներ՝ որք ամուսնութեան արգելք կը յարուցանեն, որպիսի են ժառանգական հիւանդութիւնք, ի մէջ այլոց մաշողական ախտ (վէրէմ), սրտի հիւանդութիւնք, որովայնի ելունքներ, յիմարութիւն, լուսնոտութիւն և այլ ջղային հիւանդութիւնք, գաղղիական ախտ, խոլ (սրբաճա), քաղցկեղ (ինձիթմէ), կաթուած, յոգացաւ, համրութիւն, շնչարգելութիւն, արրեցութիւն, մոլութիւն։

Մարդկային ցեղն անգթաբար հարուածող հիւանդութեանց գլուխն պէտք է դասել մաշողական ախտն։ արդարեւ ամէն մարդ գիտէ թէ որչափ մահեր կը պատահին սոյն ախտէն վարակելոց մէջ, և ամէնէն ցաւալին այն է թէ ամուսնութենէ քիչ վերջը տեղի կ'ունենան։ կրնայ ըսուիլ թէ սոյն միութիւն անոնց համար գլխատում է։ արդարեւ մեք Արեւելցիք մեծ կարեւորութիւն կ'ընծայեմք թոքային հիւանդութեանց ամուսնական խնդրոց մէջ, բայց այս զգուշութիւնք պէտք է որ բժշկաց խորհրդով լինին, վասն զի շատ անգամ աւշային, ջղային խառնուածք և արեան տկարութիւն ունեցողք յիշեալ ախտի ենթակայ կը կարծուին։ վասն որոյ յանիրաւի և ի զուր այդպիսիք ամուսնութենէ կը զըրկուին։

Ինչ որ ըսենք թոքային հիւանդութեանց համար, նոյնը կրնանք ըսել գաղղիական ախտի և խոլի համար։ սոյն հիւանդութիւնք մինչեւ ցկատարեալ բժիշկութիւն պէտք է արգելք սեպուին ամուսնութեան համար։ նոյնպէս ներքի չէ ամուսնանալ երկարատեւ հիւանդութեամբ և արեան տկարութեամբ նիւհարցած անձանց, առանց իրենց կազմի բարեփոխելու՝ յարմար առողջապահական միջոցներով և զօրացուցիչ դեղերով։ նա մասնաւորապէս աղջկանց համար բնաւ ներքի չէ, որովհետեւ սոյն պատճառը կրնան փոստակար լինիլ յղութեան և ծննդաբերութեան միջոցին։

Ամուսնութեան համար պէտք եղած զգուշութեանց թիւն լրացնելու համար կ'ըսեմք թէ պէտք է նաև ուշադրութիւն դարձնել յոգացաւերու, լուսնոտութեան, և յիմարութեան։

Թեանց՝ որք գրեթէ անպատճառ սերունդէ սերունդ կ'անցնին։

Մերթ ընդ մերթ կը տեսնէինք և կը լսէինք առողջաբանական կանոնաց հակառակ ամուսնութեանց աղետաբեր հետեւանքներն, սակայն ժամանակէ մ'ի վեր յաճախ ականատես լինելով այսպիսի միութեանց աղետաբեր հետեւանաց, պարտ անձին վարկայ գրել սոյն ամենակարեւոր նիւթոյ վրայ, և գիտնալով թէ օրինակներ աւելի համոզիչ և խրատիչ կը լինին, կը դնեմ ի ստորև անոնցմէ երկուքն։

Ուսեալ և բարեկիրթ մի անձ կ'ամուսնանայ քաջառողջ և գեղանի աղջկան մը հետ, և հազիւ մեղրալուսինն լմնցած էր, փեսայն ենթակայ կը լինի անբուժելի և սոսկալի մի հիւանդութեան՝ որ ընդերկար զինք և իւր ընտանիքն տանջելէ զինի, ի գերեզման կը տանի ցնա, թողլով ի յիշատակ աստ մի արուզաւակ։

Միւս ոմն կ'ամուսնանայ աղջկան մը հետ, որ իր կարողութենէն վեր զոհողութեանց ենթարկուած էր, և վեցերորդ օրը փեսայն յանկարծ կը մեռնի։ Ընթերցողաց կը թողում դատել թէ, որչափ մեծ կը լինի ցաւն ու կսկիծն ընտանեաց ի տես այս անակնկալ հարուածոց։ բայց ի՞նչ է պատճառն այս ամենայն աղետից, եթէ ոչ անհեռատեսութիւն և առողջաբանական օրինաց տգիտութիւն, զի անշուշտ երկուքն ալ առաջուց ենթակայ էին անբուժելի հիւանդութեանց։ եթէ այդպիսիք շարունակեն իսկ ապրիլ, ո՞րպիսի սերունդ կրնան յառաջ բերել։ ի հընուսն սպարդական բարբարոս օրէնք մը կը հրամայէր խեղդել նորածին վատոյժ և հիւանդոտ մանուկներն։ զարդիս նուա՞ջ բարբարոսութիւն կը լինի այնպիսի սերունդ ծընանող անձերը թողուլ ազատօրէն ամուսնանալու։

Եթէ ուշի ուշով քննեմք ամուսնական վէճերու բուն ու սկզբնական պատճառն, կը տեսնեմք թէ անյարմար ամուսնութեանց հետեւանքն է։ զոր օրինակ, երկտասարդ մը կը հրապուրուի ձեռք տալ ամուսնութեան թէ՛ ֆիզիքապէս և թէ՛ բարոյապէս անյարմար աղջկան մը, որոյ մի միայն առաւելութիւնն է մեծագուժար ժառանգութիւն մ'ունենան, եւ ապա կ'ունենան մի այլանդակ զաւակ՝ որ փոխանակ իրենց ամուսնութեան կապն ամրապնդելու, խղման պատճառ կը լինի։ փոխադարձաբար նորահաս և զգայուն աղջիկ մը կը բռնադատուի ամուսնանալ իրմէ հասակով, դիրքով, բնաւորութեամբ, գաղափարներով և զգացումով բոլորովին տարբեր մարդու մը հետ։ ի՞նչպէս կարելի է հաստատուն լինիլ այսպիսի անհամեմատ և անբնական ամուսնութեանց կապն։ այն ամուսնութիւնն որ չէ հիմնեալ փոխադարձ սիրոյ և համակրութեան վրայ, շատ թոյլ և անցոր է, և արդէն բնութիւնն իսկ կը պատժէ զայդպիսիս՝ տալով վատոյժ, նիհար ու հիւանդոտ զաւակներ որք հուսկ ուրեմն աղքատութեան ճիւղաններուն կը մատնուին։ վասն որոյ բանաւոր և բնական է արգիլել այդպիսեաց ամուսնութիւնը յօգուտ իրենց անձին և մարդկային ընկերութեան։

ԱՆԿԵՂՄ ԲԺԻՇԿ ՄԸ

ՍԻՐՈՒՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ մանկանց և պատանեաց համար։ Պատկերազարդ։ Թարգ. Ա. Թ. Կէզիւրեան։ Երես 80։ Տպ. Գրաշարաց Ընկ. Գին 100 փր։ Կը ծախուի գրաւաճառաց քով և Ուզուն-Չարչը պալը, թիւ 402, փալադաշեան ֆորագրատունը։ 5—5

ՀԱՐՍԱՆԻՔՆ Ի ՉՄԵԿԱԾԱԳ

Հինգշաբթի էր. դրացի կանայք միահամուռ կը գիմէին դէպի Գարիկ աղբօրը տունը՝ կը թուէր ինձ՝ պարտականութիւն մը կատարելու: Հետքերբեալ հարցուցի մի պառաւ կնոջ: «Տարօքը քըզի, օղուլ, Գարիկ աղբարը տղան կը ծաղկընէ ես օր, Շնաւորում կենին», պատասխանեց: Կանանց բազմութիւնն երթալով կը խռնէր. ըստ սովորութեան մին տասը հաւկիթ ծոցը դրած, միւսը մի չիշ օղի առած ի ձեռին, ոմն սոխ դրած իւր թաշկինակին մէջ, այլ ոմն մի կաւապա (կատարելութեան հասած դդուս), բռնած ներս կը մտնէին: Սոքա կարգաւ կը մօտիկնային Գարիկ աղբօրը կնոջ Սառա և կնքամօր Եղսա խաթուններուն, որոց իւրաքանչիւրն սենեկի վառարանին (օճազ) մէկ անկիւնը բազմած, մէկ մէկ խնձոր տալով, «Շընորհաւոր ըլլի, մէկ հացով մէկ բարձով ծերանան» փախալով կը նստէին: Ի վերջ դրացի կանանց հաւաքման, տան տիկին Սառա խաթունն իւր հիւրերն առած սեղանի կը նստի, օղիի բաժակն նախ ինք ձեռք առնելով՝ «բարի եկաք անամ հազար բարի, տարօքը ձեր դաւըններուն չուզողիս տունն ըլլի» ըսելով կ'ըմպէ, միւսներն ալ ըստ կարգին բարեմաղթութեամբ: Չմոռնամք ըսել թէ ճաշէն վերջը լուացուին արգիլուած է. զի մի գուցէ հարսին և փեսին շնորհքը փախչի:

Երեկոյն Գարիկ աղբօրը տան մէջ հեռիէն հիւր եկող բարեկամք և բարեկամուհիք (առ հասարակ իգական սեռէ) միայն առանձինն թմրիօք և պարովք ժամանակ կ'անցունեն:

Առաւօտ է. հարսնետան մէջ ամէն ոք ըզբաղած է. հոս ոչխարներ կը գենուին, հոն աքաղաղ կամ հաւ. այս վերջնոյն փետուրներն կնքակնոջ պարտքն է մաքրել. անմաքրութենէն եկած պատուոյ արատն իրեն վերադարձելով՝ ոչ ոք պատասխանատու է:

Աքաղաղներու գենման թիւն հարսնացուն կողմէն եկած հրահանգէն կ'ստուգուին. քանի հատ որ ուզէ, այնչափ պարտաւոր են տանիլ մեր հարսները: Սովորութիւն է որ հարսնացուն ծնողք՝ խնամիկն կողմէն եկած եփուած ոչխարն ու աքաղաղները դրացեաց կը բաժնեն զոյգ զոյգ հացերու մէջ գնելով, որք կը կոչուին կից հաց, աքաղաղները մտերիմ և մեծատուն բարեկամաց, իսկ ոչխարը մնացելոց:

Ուրեմն, ըստ այս սովորութեան, հարսնացուն ծնողք իւր դրացեաց և բարեկամաց թուոյն համեմատ պատուիրած էին բերել մէկ մեծ ոչխար, 20 աքաղաղ, 60 զոյգ հաց:

Կնքակնոջ թո՛ղ իւր գործով զբաղի, այսօր մեր Գարիկ աղբար մի քանի երիտասարդներու՝ ըստ թուոյն դրացեաց՝ խնձորներ կը բաժնէ և կը պատուիրէ իւրաքանչիւրին՝ որոշեալ տունն երթալ, տան աղային կամ տան տիկնոջ տալ մի մի հատ, հարսանիք հրաւիրել հետեւեալ օրն, երկիցս երկցս պատուիրելով թէ «Գացէ՛ք, բարե երէ՛ք իմ բերնէս, թող վաղը հարսնիք հրամմեն»: Խնձորները բաժնուելէ յետոյ, մի ուրիշ երիտասարդ առանձինն տնակ տնակ կը շրջի և երեկոյն ճաշի կը հրաւիրէ զդրացիս և ըզբարեկամս:

Հեռի եղող բարեկամաց հարսանեաց հրաւիրագիր խնձորներն արդէն զրկուած էին 4-5 օր յառաջ. այսօր կ'ստուգեն նոցա գալըստեան:

Ժամը ութնէն վերջ հեռաւոր բարեկամք և

բարեկամուհիք հեծեալ ի ձի և ի ջորի, ամէն կողմերէ սկսան գալ, և իւրաքանչիւրն ընդունուեցան, գիրկընդխառն մեծարանօք՝ տան տիրոջ և տիկնոջ կողմէ:

Ժամ 11ի միջոցին, Զուռնայի և Տալուլի զմայելի ձայնն լսելի կը լինէր գիւղէն քառորդ ժամ հեռաւորութեամբ. հարսնետունը կուգային մի այլ գիւղէ. աղայոց խուռներամ բազմութիւն մը «չէն օլլալըմ չէն» ուրախութեան ճիչեր արձակելով ընդ առաջ կ'երթային:

Պաղի եղանակը փոխուեցաւ ըստ փափաքանաց մեր փոքրիկ հիւրընկալներուն. այս վերջինք իրենց միօրինակ շարժումն ձգեցին, խաղալով ցատկելով մինչեւ հարսնետան դռան առջին հասան: Հոս բաւական ժամանակ ոտքի կանգնած նուագեցին. բարեկամներէ ոմանք ներս կը հրաւիրէին, բայց մեր զուռնանք և տալուլին կամք չը յայտնեցին ներս մտնելու. դրացիներէն մին գոչեց. «նազ կ'ենեն, նազ, պախչիլ պէտք է որ ներս գան, չէնէ չըլլի»: Յայնժամ տան տիկին դուռը գալով ողջունեց և երկու քառորդ մէճիտ հանելով, մին զուռնանք և միւսն տալուլն ճակատը փակցնելով ներս մտաւ. սոքա ևս լռեցուցին գոռումն և գոչումը և հետեւեցան տան տիկնոջ, որ առաջնորդեց զանոնք հիւրանոցն՝ ուր «բարի եկաք» ներով յարգուեցան:

Ճաշի հրաւիրեալ դրացիք և հեռաւոր բարեկամք և բարեկամուհիք արդէն հասած էին. ընթրիքն պատրաստ էր: Մէկ մակարդակի վրայ երկկողմանի փռուած տեղական գորգերու վրայ բազմած էին աւելի քան 50 հրաւիրեալք (արական սեռէ). լոկ ձերմակ կտաւեայ փռոցներ ընդ երկայնութեամբ սենեկին փռուելով, 3-4 սպասաւորք կարգաւ շարեցին դրդալ, պատառաքալ և հաց. կերակուրներն սկաւառակներով 1 առ 3 անձ բաժնեցին. կերակրոց տեսակներն են եաննի (դդումէ և սոխէ բազկացեալ), soyma և փիլլա: Յետ աւարտման ընթրեաց, ինչպէս վերեւ յիշեցինք, լուացուին արգիլուած լինելով, ամէն մարդ իւր տեղը նստած էր: Սուրճի սովորութիւն չը կայ հարսնետան մէջ:

Ամէն կողմէն ձայներ դէպի զուռնանքին «հայտէ նայինք զուռնաճի, չըբրիլդ չորնայ, պաշլայէ, խաղողները քըզի կը նային» կը գոչեն: Զուռնաճին հակառակ, «չորնայ» բարեմաղթութեան, թուքով սկսաւ թրջել զուռնային եղեգն և այլանդակ ճիչեր արձակել: Նախերգանքն սկսաւ առանց տալուլի ընկերակցութեան. երկու գեղեցիկ խաղացող երիտասարդք կը պատրաստուէին խաղալու: Պաղու եղանակը փոխուեցաւ տալուլին գոռումով:

Դրացեաց տուններն այլ ևս մարդ չէր դուռնուեր. ամէն ոք առանց խորութեան, հարս, աղջիկ, մանչ, աղաքներով խռնած էին հարսնետուն: Այսպիսի գիշերներ ստէպ գողութեան զէպքեր ալ կը պատահին դրացեաց տուններն:

Հանդիսատեսք մի աւ մի, իրենց ձեռք երկու տասնոց կամ քսան փարանոց առած, «ուլէք պլաշի սիւլէն տոսթ» միաբերան և բարձրաձայն աղաղակներով 5 վայրկեան տեւողութեամբ կը խաղային երկու երիտասարդքաց հետ, և այդ փարանքին մէկ մէկ կամ երկերկու խաղացող երիտասարդաց ճակատը փակցունելով, իրենց տեղը կը նստէին: Շատեր ևս, առանց խաղալու, նստած տեղէն պարտաւոր էին յարգել այդ օրէնք: Ընթեր-

ցողին ըսել հարկ չէ թէ այդ դրամներ ո՞ւր կ'երթային. յայտնի է թէ զուռնանքին անդրավարտեայ գոգն:

Այսպէս խաղն ու խօսակցութիւնը կը տեւէր մինչև գիշերուան ժամը 7-8 (ձմեռ եղանակին). այնուհետեւ բազմութիւնը կը ցրուէր, ամէն մարդ իւր տունը:

Շաբաթ օրը կը լուսանայր. պայծառ արեգակն ջինջ ոսկենման կը փայլփլէր ձեան կուտակաց վրայ. ծառեր՝ կարծես բարկացած ձիւնէն՝ վար կը թօթափէին իւրեանց ճիւղերէն երկօրեայ յարատեւ տեղացող ձիւններն, և տեղի կը տային արեգակնային ճառագայթից՝ պատասել զիրենք, իրաց վանելով ցրտաչունչ հոգմոյն հետքն:

Մեր փեսացու Յակոբիկի բազուն է սա. իւր կեանքի մէջ թէ և շատ կերած էր հերիսայի (քէշկէկ) քերուկն, բայց բաղդը զօրաւոր ըլլալով յաղթող գտնուած էր իւր յանցանաց: (Տեղացիք այնպէս ըմբռնած են թէ քէշկէկի տակի այրած ուտողին հարսանեաց օրն անպատճառ պիտի անձրեւէ կամ ձիւնէ): Ուստի հարսնաւորներէն գովեստներ կը տեղային մեր Յակոբիկի. «Աֆէրիմ փեսայ, մըզի խթիր նայեցար տէն քէշկէկի ուք չի կերար, էկէլ հարսնոցուհիս ըլլէ կերեր նէ, քէֆը մերն է», կ'ըսէին:

Ժամը 4 ին հարսնաւորաց սեղան կը պատրաստուէր. օղիի չիւերն մէկ մէկու ետեւէ կը պարպուէին՝ ցրտոյն դէմ գնելու պատրուանօք: Տէր սկսական սեղանի գլուխն էր. աճապարանօք «Ճաշակեցուք» ըր ըսելով գոչեց. «Հայտէ՛, զուռններս, հարսնաւոր եղողը թող հրամմէ»: Գինուոյ կարասըն տակաւ կ'զգար իւր դատարկութիւնն. կարգը միւսինն էր: Այս տարի Գարիկ աղբար արդէն կանուխէն պատրաստած էր քաղցրահամ զուռ գինին նախորդ տարիներէն չափ առաւել. մառանը 4-5 կարաս քով քովի կեցած էին կնքուած՝ իւրաքանչիւրը 10-12 լիտր (6 օխա) պարունակութեամբ. տակաւին մէկ հատը բացուած էր, այն ալ կը հատնէր:

Զուռնանքի և տալուլին հարսնետան դուռն էին, հարսնաւորաց հաւաքման ելնելու եղանակը կը գոռացնէին: Ամէն մարդ աճապարանօք մէջ էր. ձիեր ջորիներ պատրաստ կուգային ամէն տունէ. իւրաքանչիւր ոք կը ճանչէր իւրն. նախապէս կանայք կը հեծնէին, ապա արք կարգաւ. հարսնաւորաց մէկ ծայրը գիւղէն դուրս ելած էր արդէն. ձիաւորք տափարակ արտի մը մէջ մարզանքներ կ'ընէին ըստ եղանակի տալուլին:

Հարսին յատուկ մատակ ձին ամենէ վերջ կ'երթար, բայց հարսն չէր հեծած: Մատակ ըսինք, որովհետեւ օրէնք է որ հարսին հեծնելը ձին անպատճառ մատակ ըլլայ. եթէ արու լինի, հարսն ամուլութեան կը դատապարտուի:

Հեռիէն դիտողին յայտնի կը լինի հարսնաւորաց թիւն: 22 հեծեալ կանայք սպիտակ մէնթիլներու (չարշաֆ) ներքեւ կարգաւ կը հետեւէին մէկ մէկու. ես 22 կը հաշուէի, բայց առ ընթեր իմ կանգնող մի կին կը պնդէր թէ 21 ու կէս է. զարմանալով հարցուցի թէ կէս ի՞նչ ըսել է, արդեօք կնոջ մը կէսը կտրած կը տանին. սակայն պատասխանեց թէ 21 կնիկ և մէկ աղջիկ կար: Յայնժամ կարացի դիտնալ կնոջ միտքն թէ աղջիկը կէս կը հաշուեն: Առանց թիւն 40 էր յորոց 33ն հեծեալ, իսկ մնացեալ 7ն հետիոտն կը գնային, ի հարկին ծառայելու հեծելոց:

Գրեթէ 3 ժամու ճանապարհաւ պիտի եր-

Թային 85 տուն բնակչությամբ մը: Սոքա իշխանավոր եղև թող զնան, մենք կանխենք յառաջ քան զհարսնաւորս հարսնացուն տուն:

Տունէն ներս մտնելով առաջինն լսեցի աղջկանց բարձրաձայն տեղական աւուր պատշաճի երգն և լացի ձայն մը, կծկտուր հեծկտանք մը. մի ուրիշ դուռնէ ներս էր սաքիչ մը ունկնդրութիւն, լացողը հարսնացուն էր. այս ժամուն էր որ կը լուային զհարսնացուն. այս արարողութեան «Աղջիկ բաղնիք» անունը կը տան: (Այս լուացումն տըներու մէջ կը կատարուի հոն ուր բաղնիք չը կայ): Օրիորդք բոլորակի հաւաքեալ գըլխուն վերև, լացու խաղեր կ'երգէին:

Աւելորդ չ'եմք. համարիր այդ խաղերէ մի քանին աստ յիշել.

Աղջիկ մ'ը կը սանին ալով ու լալով,
Մագերնը կը հիւսն սրումաի թելով,
Դըլուխնը կը փաքթեն լանուի շալով:

Խրդ սիւկիւնցին իննէ եօլս սիւկիւլիս,
Ալուն քաւ իշխնէ խրման էգիլիս,
Կիւմիւս քարաղ իւլն գիւլիս չէգիլիս:

Լեռներն ի վեր կ'երբաս կանանց մորի է,
Ձատած հօրէս մօրէս էս ի՞նչ որ է,
Աղջիկներուն լացը մէկ երկու որ է:

Աղջիկ սէնի կէօրիւրիւրէր իւրսնացան,
Անան պապան ժլի օլուր սէրսինէն,
Մի՛ լար՝ աղջիկ, մի՛ լար՝ աչքը կ'աւրի,

Գեղ պզտիկ սանոյին սնակն աւրի:
Չալմայըն սալուի խրդա եագուիս սր,
Խըզըն իւրէկիկի գաթի նէգիկի սր:

(Շարունակելի) Խ. ԶՕԼԱԳԵԱՆ

Թէ Ինչո՞ւ

«ՎԱՐԴԱՊԵՏ Ի ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ»

«Ծաղիկ»-ի նախորդ թիւոյն մէջ մեր վերջնական խօսքն ըրինք Մարգարեան Աշխարհագրութեան սխալներուն նկատմամբ, առաջարկելով կարող և անաչառ մասնագիտաց կողմէ քննութիւնն նոյն գործին, և իրաւունքը կորսնցնողին կողմանէ 5 օսմ. ոսկւոյ վճարումն Ազգ. Հիւանդանոցին: Այժմ ցոյց պիտի տամք թէ ինչո՞ւ կ'ստորագրեմք «Վարդապետ Ի Դեղագործութեան», զոր կը խմբէ Պ. Մարգարեան՝ համարձակելով անձնականութեան իսկ դպչիւ, որոց համար կը ներեմք այս անգամ և կը խնայեմք:

Պ. Մարգարեան «Ընտել երբէք» չէ լսած եղբւր «Վարդապետ Ի Դեղագործութեան», «ու լսելիք ալ չունի ո եղբւր. Թո՛ղ բարեհաճի բանալ ն. Բիւզանդացւոյ հոյակապ բառարանին 771 երեսն, և կարգաւ երկրորդ սիւնակի 17-18 տողերուն վրայ Maitre բառին համար գըրուած սա նշանակութիւններն — «Վարդապետ. ճարտար. հմուտ, տեղեակ... Վարդապետ (jarmacus). արուեստագետ» մեր վեկայագրոյն վրայ ալ գրուած է — «Diplôme de Maître en Pharmacie de l'Ecole Médicale Civile»: Ուրեմն Պ. Մարգարեան՝ Տ. Նորայր Բիւզանդացիէ աւելի՞ մեծ հեղինակութեան աչքի է. եթէ այո՛, թող հաճի վարդապետ բառին տեղ պատշաճագոյն բառ մը ցուցնել մեզ և հաղորդել Տ. Նորայրին, որով յանձնու երախտապարտ պիտի կացուցանէ զԱզգն և զմեզ:

Կ. Յ. ՊԱՍՏԱՃԵԱՆ

Վարդապետ Ի Դեղագործութեան

Գ Ի Շ Ն Ր

Գիշերային լրուրիւնն սիրած էր,
Եւ ամեն ոք էր ի խոր փուն կիսամեղ,
Բայց փուն չեկաւ երբէք աչացու նոյն գիշեր,
Ուսի ելայ ես դըռնէն դուրս անվիհեր:

Օղբն չ'էր տալ եւ ոչ ալ ցուրտ, էր գարուն,
Երկինք մի շատ աստղներով զարդարուն,
Բայց աւելի վեհ տեսարանն էր լուսնոյն
Որ իբր հերոս կ'դիմադրէր ամպերուն:

Խաղաղ, հանդարտ ծածանէր ջուրն ծովակին,
Անդ կը լուար դողդողալով վեհ լուսին,
Իսկ նաւակներն հանգիստ, ազատ սահէին,
Քանի չը կար սասկաւունջ հովն ու փամին:

Մինչ ակնայիւ կը դիտէի բընութեան
Դեղատեսիլ եւ հիասքանչ տեսարանն,
Յանկարծ մի խուլ ձայն լսեցի երկնային,
Որոշումն էր, որ կը գողար իմ գըլխին:

Մըրրկայոյզ ամպերն եկան սրբաբաւ,
Երկինք կորոյս գեղն իւր սակաւ առ սակաւ,
Չըկար ալ ես ո՛չ լուսինն եւ ոչ աստղեր,
Ոչ իսկ երկինք, միայն կային սեւ ամպեր:

Որպէս առիւծ մը ընդէր հովն սասկաւալէս,
Ծովն արձակած իւր կոհակներն փրփրաղէզ,
Ափանց վրայ բաղխէր ուժգին եւ հանգչէր,
Ձի բարկութիւնն նորա համար նոր բան չէր:

Փայլակ, կայծակ յաջորդեցին որոշման,
Սրափեցայ երբ տեսայ զայս ամենայն,
Անմիջապէս ես բընեցի տան համբան
Ձի մի միայն այս կ'մընար ինձ դարման:

2 փետրուար 1881

ԳՐԻԳՈՐ ՄԵՐԿՆԵՐԱՆ

ԱՆՄՈՒԱՆԱԼԻ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Գ.

ԱՆԻՈՆՁ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Կը զարմանամ մեր վրայ որ քիչ մը շատեկեկ վիպասանութիւն թարգմանողներուն անխոնջ աշխատողի տիպոսը կը չաւայեմք, և չ'եմք իսկ հարցներ որ գրպանը պարարելով թէ ազգին օգտակար հանդիսանալու համար աշխատած է նա: Եթէ ունենայինք Արախոյի՝ որուն կեանքը պիտի պատմեմ ի ստորեւ, էտիսընի և այլ բաղմաց նման մեծ գիտուններ, արդեօք որչա՞փ պիտի փառաւորէինք զիրենք. սակայն ո՛չ, վստահ եմ որ իրենց երեսն անգամ չը պիտի նայէինք, մեք՝ Հայքս Դոմիւնիկ-Ֆրանսուա Արախո ճիշդ 105 տարի առաջ 1786 փետրուար 26 ին ծնած է յէսթակէլ (Ֆրանսա) և գիտական աշխարհին յառաջագիմութեանն աշխատող անուանի անձնաւորութեանց մին է:

Բերրիւնիւնի վարժարանին ուսումնաւորն էլ յետոյ, 17 տարեկան Բազմարուեստեան Վարժարանը մտաւ, ուր առաջնակարգ աշակերտն էր: 20 տարեկան հասակին մէջ Երկայնութեանց Դիւանին քարտուղար եղաւ, և 1806 ին Մոնթի (1) յանձնարարութեամբ կայսրը պաշտօն յանձնեց իրեն, Պիլյի (2) աշ-

[1] Գապար Մոնթ, ծնեալ ի Պոն 1746 ին, մեծ չափագէտ և Բազմարուեստեան Վարժարանի հիմնադիրներէն մին է. թէպէտ Նաբոլէոն զինքը կոմսութեան բարձրացուց, բայց Մոնթ 1818 ին մեռաւ յուսահատ և ինքն վիճակի մէջ:

[2] Պիլ, կարեւոր գիւտերով անմահացած աստեղագէտ, չափագէտ և բնագէտ [1774—1862]:

խատակցութեամբ Շէ և Ռոտրիկէզ սպանիացի ներկայացուցչաց հետ՝ մինչեւ Պարսկոնա երկարած երկրային միջօրէականի աղեղան չափն աւարտել: 1808 ի Սպանիոյ պատերազմին ժամանակ, ժողովրդեան բարկութենէն խոյս տալով, երկար տառապանաց և բանտարկութեանց ենթարկուելէ յետոյ, 1809 ին միայն կրցաւ Բարիզ դառնալ, ուր 23 տարեկան հասակին մէջ բացառարար Դիտական Ակադեմիոյ անդամ ընտրուեցաւ, և Նաբոլէոն ալ Բազմարուեստեան Վարժարանին դասատու կարգեց զինքը, որ 20 տարիէն աւելի դասախօսեց անդ երկրարաշխութիւն և տարրալուծումն: 1830 ին Չափական գիտութեանց Ակադեմիոյ մշտնջենական քարտուղար անուանեցաւ, որով կը պարտաւորէր ամէն տարի մեռնող նշանաւոր գիտնոց գովեստըն արտասանել. իւր այդ ճառերն մեծ համբաւ ստացած են իրենց յստակ, կտրուկ և խորիմաստ ոճովն: Արախո Եւրոպիոյ բոլոր Գիտական Կաճառներուն անդամ էր, և բոլոր վեհապետք իրենց պատիւները շնայած էին նա: 1830 էն յետոյ քաղաքական մարդն երեսն եկաւ յանձին Արախոյի: Երեսիսխանական ժողովոյ մէջ ծայրագոյն ձախակողմեանց պետերէն էր: Սենի նահանգին Ընդհ. Պորհրդոյն անդամակցելով, մինչեւ 1849 նախագահեց նա: 1848 ի առժամանակեայ կառավարութեան մասնակցելով, պատերազմական և ծովային կրկնակ նախարարութիւնները վարեց և Սահմանադրական ժողովոյն կարգած յանձնախմբին անդամակցեցաւ:

Քիչ մ'ալ գիտական մարդը քննենք:

Երկար ուսումնասիրութեամբ յաջողեցաւ ապացուցանել որ լոյսն ապակւոյն մէջ աւելի ծանր կը յառաջանայ քան թէ օդին մէջ. այսու տեսարանական համարժէից տեսութեան հիմը դնելով, և միւս կողմէն ծածանական տեսութիւնն ալ գտնելով, Նիւթընի աղեղնոցողական տեսութիւնը ջնջեց, Դարձեալ Պիլյի աշխատակցութեամբ միջնորոտային բեկեղմանց խնդիրը լուսարանեց: Երկրային դուրսութեան մի սքանչելի նկարագիրն ըրաւ: Գուռաւոր բեկեղեկմանց տեսութիւններն ալ գըտնելով, թանկագին լուսաչափ մը և գունաւոր լոյսը բնականէն զանազանեւ գործի մը հընարեց, որով արեգական ճառագայթը տարրալուծելով՝ անոր աղբիւրը գտնել յաջողեցաւ: Մինչ ցայն վայր եկող մեծ բնագէտը աստեղոց փայլն անբացատրելի կոչած էին. Արախո կրցաւ բացատրել թէ տարբեր խտութեամբ օդոյ խաւերէ անցնող լուսնոյ ճառագայթներուն՝ իրարու հետ խաչաձեւելով նուազելէն յառաջ կը գայ: Նիէքսի և Տակերի գիւտն (լուսանկար) ընդհանրացնելու մեծ հոգ տանողն և զայն կառավարութեան ներկայացնողն ինքն էր: Մեծ ճշգրութեամբ որոշեց մոլորակներուն տրամագծերը, Ելեքտրական մագնիսականութեան վրայ նոր փորձեր աւելցուց: Թաւալմամբ մագնիսականութիւնը գտնելուն համար Լոնտոնի արքայական ընկերութեան Գործէյի ոսկեայ շքադրամն ընդունեցաւ: Երկայնութեանց Դիւանին Տարեգիրն հարստացած է իւր բազմաթիւ կարեւոր յօդուածներովն:

Արախոյի վրայ որչափ խօսուի քիչ է, որովհետեւ ոչ թէ միակ, այլ բազմաթիւ գիտութիւններ իրմով նոր մղում մը, նոր փայլ մը ստացած են, ինչպէս աստեղագիտութիւնն ու երկնային բնագիտութիւնը, մէտէորաբանութիւնն ու միջնորոտային բնագիտութիւնը, տեսողականութիւնն ու բնական աշխարհագ-

րութիւնն իւր նորանոր գիւտերովն հարստացած գիտութիւններ են :

1853 Հոկտեմբեր 2 ին մեռաւ Արալիօ , և ինք որ տեսողականութեան այնչափ ծառայութիւններ մատուցած էր , իւր աչաց տեսութիւնը կորուսած կը ննջէր ի քուն յաւիտենականութեան : Վ. ԳԱԼԲԱՔՃԵԱՆ

26 փետրուար 1891

ՃԵՐՄԱԿ ԶԻԱՒՈՐՆ

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

Այսօր Հայաստանեայց եկեղեցին կը կատարէ զտօն « Սրբոյն Սարգսի զօրավարի և որդւոյ նորա Մարտիրոսին և չորեքտասան զինուորացն » : Կան արդարեւ ձիաւոր Սուրբեր , որք նշանաւոր եղած են և ի ձի աշտանակեալ նկարուած և աւանդուած են ժողովրդեան : Այս Սուրբերն են գլխաւորապէս հետմակ ձիաւորն Սուրբ Սարգիս , կորսագիւտն Սուրբ Մինաս , Տիգրանու Սուրբ Գէորգ , Եւսեբու ձիաւորն Սուրբ Թէոփորոս կամ Թորոս և այլն , որք թէ և անուամբ օտարազգի կը յիշուին , այլ սակայն որովհետեւ այս սուրբերու սխրալի և հրաշալի գործերն ընդհանրապէս մեր բնական երկրին մէջ հոգեւորաւ և կատարուած են , ուստի միշտ յարգուած ու սիրուած են մերայիններէն և այնքան չափազանցօրէն , որ այլ եւս այս սուրբեր բոլորովին հայացած են :

Այս կարգէն է Սուրբ Սարգիս , որոյ ծագումն ևս հայկական է , զի է Կապադովկիոյ երկրէն , որոյ մայրաքաղաքն է Կեսարիա : Սա Կոստանդնուպոս կայսեր օրով հռչակաւոր եղաւ իբրեւ զօրավար , մանաւանդ իբրեւ քրիստոնէայ զօրավար , այլ սակայն երբ չար Յուլիանոս յաջորդեց կայսերական գահուն , և կռապաշտութիւնն իբրեւ պետական կրօնք՝ վերստին հրատարակեցաւ , և քրիստոնէութիւնն վերստին անլուր հալածանաց ենթարկեցաւ , Ս. Սարգիս չուզելով կռապաշտ կայսեր ծառայութեան տակ մնալ , և քանի որ իւր հայրենի բնագաւառն եւս , այն է Կեսարիա , յայնժամ Հռովմէական պետութեան հպատակած էր , ուստի իւր Մարտիրոս զաւակն առնելով՝ փախտական գնաց ի տար աշխարհս , և ապա ի Պարսկաստան առ Թաքաւորն Շապուհ , որ իսկոյն զօրաց գունդ մը յանձնելով Սարգսի , կարգեց զնա կողմնապահ ընդդէմ ասպատակիչ զօրաց Յուլիանոսի :

Սուրբ Սարգիս հաւատարմութեամբ Շապուհի ծառայելով՝ անտարբեր չմնաց ի մասին քարոզութեան աւետարանական ճշմարտութեան , և իւր գունդը տակաւ առ տակաւ լուսաւորեց հաւատով Յիսուս Քրիստոս :

Շապուհ լսելով Սարգսի յաղթութիւններն ընդդէմ զօրաց Յուլիանոսի , նորա զաւակն Մարտիրոս որ առ իւր կը գտնուէր , թէ՛ խնդակցութեան և թէ՛ պատուով առ ինքն հրաւիրանաց համար զրկեց առ Սուրբ Սարգիս : Մարտիրոս ճանապարհի յանկարծակիի գալով Յուլիանոսի զօրաց ձեռքը գերի ինկաւ . այս լսելով հայրն , մեծապէս տըրտմեցաւ և աղօթեց իւր գնդին հետ առ Աստուած իւր մանուկ տղային փրկութեան համար : Արդարեւ հրաշալի եղաւ աղատութիւն Մարտիրոսի և զոր տեսնելով նորահաւատ գունդն , աւելի ևս հաստատեցաւ քրիստոնէական հաւատքին մէջ :

Սուրբ Սարգիս՝ ըստ հրաւիրանաց Շապուհի՝

իւր գնդին և զաւակին հետ վերադառնալով ներկայացաւ Շապուհ , որ յետ մեծամեծ պատուոց և յարգանաց , հրամայեց Սարգսի ի միասին երթալ ի կռատուն և անդ զոհել կըրակի և երկրպագել արևու : Սուրբ Սարգիս իւր քրիստոնէութիւնը յայտնելով մերժեց այս արքայական հրաման : Բարկացան մոգերն և անդէն իսկ յարձակելով փողոտեցին մեհենին մէջ Մարտիրոսը որ ըստ անուանն այսպէս մարտիրոսացաւ վասն անուանն Քրիստոսի : Իսկ հայրն՝ Սուրբ Սարգիս , որդւոյն այս նահատակութենէն անխուղ , գոհացաւ հրապարակաւ առ Տէր Յիսուս ի մեծ սքանչացումն հեթանոսաց որք առաւել կատաղելով , պնդագին կը թախանձէին Շապուհ որ անմիջապէս հրամայէ Սարգսի ևս նահատակութիւնը՝ որոյ կենդանութիւնը քաջալեր էր այն գնդին , որոյ Վհ զինուորներ արձակ համարձակ կ'աղաղակէին և կը պնդէին թէ իրենք ևս քրիստոնէայ են և պատրաստ ի մահ վասն հաւատոցն ի Քրիստոս :

Ի զուր Շապուհ փորձեց դրդել Սուրբ Սարգիսն իւր հաւատքէն . յորդորներ և խոստումներ ապարդիւն մնացին , և Սարգիս վերջապէս սուսերահար գլխատեցաւ : Իրեն հետ ի միասին իւր գնդէն Վհ զինուորներն ևս վկայեցան իսկոյն , որոց ամենուն վրայ լոյս ծագեցաւ երկինքէն ի սարսափ և յարհաւիր հեթանոսացն որք ներկայ էին անդ : Հաւատացեալք տեսնելով թէ հեթանոսք սարսափահար լինելով այս երկնային լոյսէն , հեռացան ու մեկնեցան , սրբոց մարմիններն առնելով մեծահանգէս ամփոփեցին ի քաղաքն Համիան որ ի Մաղանդարան գաւառ :

Ոչ չատ ժամանակէ յետոյ , սուրբ Մեսրոպ , գործակիցն Սահակայ Պարթև կաթողիկոսի , որ հայերէն գրոց գիւտը կատարելով , ոչ նուազ ծառայութեամբ փայլեցաւ և քարոզութեամբ աւետարանական վարդապետութեան , մանաւանդ ի հեռաւոր աշխարհս ի Վրաստան և յԱլուանս և մինչև իսկ ի սահման Պարսից , երթալով ի Մաղանդարան Սուրբ Սարգսի մարմինն անտի փոխադրելով՝ բերաւ և ամփոփեց ի Կարբի գիւղ , ուր վկայարան շինելով , տօն սահմանեց յանուն սուրբ Սարգսի և որդւոյն Մարտիրոսի և չորեքտասան զինուորացն . վկայարանս է այսօր հռչակաւոր վանք :

Այլ այսպիսի մի Սուրբ կարելի չէր անյուշ մնալ հայկական եկեղեցւոյ քնարերգակ սրբազան բերաններէ և սրտերէ : Գեղեցկահիւս մի շարականի բոմբիւնք այսօր ի թունդ կը հանեն ոչ թէ միայն եկեղեցեաց կամարներն ու գմբէթներն , այլ և բարեպաշտ սըրտեր ունկնդիր ժողովրդոց : Սոյն շարականի սկզբնական տողերն աստանօր կ'արժէ դնել , ցոյց տալու համար թէ՛ հեղինակ երգողին և թէ՛ նահատակ երգեցելոյն ընտիր և սուրբ արժանիքը .

« Ամենասուրբ Երրորդութեան
Ընտրեալ ծառայ և հաւատարիմ ,
Յաղթող սպառազէն
Եւ քաջ նահատակ ,
Երազահաս սուրբը Սարգիս ,
Շնորհաց օթեան ,
Բարեխօս լեր առ Տէր
Վասն անձանց մերոց :
Թագաւորին երկնաւորի
Սուրբ զօրապետ և քաջամարտիկ ,
Սիրով անմահին
Խաչեալ յաշխարհի ,
Երազահաս սուրբը Սարգիս ,

Խաչիւ պսակեալ ,
Արեգական արդարութեան
Մեծ կարապետ , պայծառ արուսեակ ,
Ցուցեալ յարեմտից
Ի յեւ արևու ,
Երազահաս սուրբը Սարգիս ,
Անշջ ճառագայթ . . . »

Այլ այս Սուրբն ևս ունեցաւ իւր թշնամիներն , աւաղ , նոյն իսկ քրիստոնէայ աշխարհին մէջ : Ատելութիւնն , որ ի հնումն Հայ և Յոյն ազգաց մէջ այնքան խորապէս արմատացաւ , այս Սուրբին վերագրեց ամենաանվայել ստայօղ զրպարտութիւններ : Յոյնք պնդեցին թէ Սուրբ Սարգիս անարժան սուրբ է , վասն զի աղջիկ գողցած , կոյս առեւանգած է : Մերիններէն ևս մոլեռանդներ կարծես արձագանգ լինելով այս յունական համբաւուն , և աւելի եւս Ս. Սարգսի կարեւորութիւն տալով Յունաց սրտերը խոցելու և ծակելու համար՝ առասպելներ հնարեցին թէ Սարգիս յանրաւի կալանակալ Յոյն ազնուական աղջկան մը բանտին դռները խորտակած և քաղաքին աշտարակաց ծայրերն իւր մականաւ (թօփուղ) փչրեր , և իւր ձեռմակ ձիուն կռակն առնելով զայն աղջիկ , ծովեր ու ցամաքներ անցեր և աղջիկն այսպէս ազատեր է գերութենէ : Յոյնք այս առասպելին հակընդդէմ՝ հնարեցին թէ Սարգիս ոչ թէ գիւցաղն է , այլ թէ է մի ապաշխարող քաւելու համար իւր այն մեղքը զոր գործեց այդ աղջիկ առեւանգելով , և Հայոց գիւղերը մուրացիկ թափառելով իւր շունն իւր առջևէն կը զրկէ եղեր , և այս է որ Հայք ի պատիւ այս Սարգսի՝ առաջաւորի պահք ունին , և այլն , ուստի և ցայսօր Յոյնք այս եօթնեկի մէջ ի հեծուկս Հայոց պահք չեն պահեր բնաւ :

Յունական այս առասպելն ժամանակ մը այնքան ընդհանրացած էր , որ Ներսէս Շրնորհալի կաթողիկոս ստիպուեցաւ գրել առ կայսրն Յունաց Մանուէլ , որ աւասիկ . « Թողից և որ վասն Առաջաւորին պահոց առասպելաբանութիւն ի ձերոց այտի յօդեալ վասնմեր : Սարգիս , ասեն , կրօնաւոր էլ ունեւոր չսկունդ (որսի շուն) և սկնդի նորա յառաջընթաց լինելով ի տեղին՝ ուր հանդերձեալ լինէր ընթանալ Սարգիսն , աւետիս տալով գալստեան նորա , զի ընդ առաջ ընթանայցեն նմա , և ի շան նորին յանուն վասն առաջաւոր լինելոյն՝ եղեալ ասեն մեր զանուն պահոցն ի Սարգսին այն օրէնսդրութենէն . որ վերագրոյն է այս զրպարտութեան ասացուած զմէնք՝ քան զհեթանոսականացն առասպելեալ աստուածաբանութիւնն : Այսպիսի է ծնունդն ատելութեան , զի համբաւոց բարեաց յաղագս ատելոյն՝ խնուն զլսելիս և սուտ վարկանին , և ստութեան և առասպելաց բանից բանան յօթարութեամբ և ճշմարիտ համարին , որպէս և միովս այս է տեսանել , զի թէ տակաւին ի խաւարի անգիտութեան նստեալ որպէս ի կռապաշտութեան , չէր հնար այսպիսում ծիծաղական աւանդից հաւանիլ , թող թէ յայժմուս , մինչ լցեալ է ամենայն երկիր գիտութեամբ Տեառն , և լոյս իմաստութեան ծագեալ է յաշխարհ :

Այլ մեք զի առաջաւոր անուանեմք զպահսըն զայն , առաջին այս է պատճառ զի յառաջ գալով քան զպահսն քառասորդաց և որպէս զկարապետ և զնախընթաց է նմին : Երկրորդ՝ զի Հայաստանեայց ազգի առաջին այն են պահք ի Սրբոյն Գրիգորէ՝ հաստատեալ յորժամ եւն ի վիրապէն , անսուղութեամբ կալ

օրինադրելով հարուածելոցն զաւուրս հինգ յաղագս պատուհասին եղելոյ բժշկութեան, վասն որոյ և բազումք ըստ նախնեացն սովորութեան ծոմապահութեամբ զաւուրսն զայնոսիկ անցուցանեն զոր և յետոյ պատշաճ համարեցան ընդ նինուէացեոցն պահոց զայս կարգել պահք ըստ Ասորւոցն և Եգիպտացւոցն, որպէս և պահեն սրբութեամբ: Իսկ այն՝ զի յետ կատարման պահոցն զսրբոյն Սարգսի զօրավարի կատարեմք գլխատակ, այս է պատճառ, քանզի զինի ժամանակի ի նոյն թիւ ամսոյ յերեսունն յունվարի կատարեցաւ նա վկայական արեամբ վասն Գրիստոսի: Վասն այնորիկ ստանանեցան յաւուր շարաթու այնորիկ զնորայն տօնի կատարել գլխատակ, որպէս յառաջին շարաթու քառասորդացն զարդոյն թէնդորոսի տօնախմբին զոր յիշատակի ամենայն հաւատացեալք Գրիստոսի:

Եւ էր սա ըստ պատմութեան՝ իշխան երեւելի յաշխարհին Գամրաց յաւուրս Գոստանդիանոսի Մեծի, քաջամարտիկ գոլով ի պատերազմունս բարբարոսաց և բարեպաշտութեան հաւատով զարդարեալ ի Գրիստոս, և ի թագաւորել յանցաւորին Յուլիանոսի փախուցեալ ի Պարսս և անդանօր պսակեցաւ ի Գրիստոսէ հանդերձ որդւոյն իւրով վկայեալ առաջի արքային Պարսից Շապուհ զբարիքը դաւանութիւն հաւատոյ, հատեալ զգլխին սուսերաւ: (Նորհալի, Ընդհ. յեբրեւ 88)

Սուրբ Սարգիս ի մասնաւորի պաշտպան սուրբ է այն բարեպաշտիկ օրիորդաց որք յարգուեն ևն ամուսնութեան: Սոքա ոչ թէ միայն նախանձայող են ի պահս, այլև օրերով ծով ալ կը պահեն, և շատ տեղեր աւելորդապաշտութեամբ ալիւր կը ցանեն տեսնելու համար թէ սուրբ Սարգիս ի գիշերի իւր ձիուն հետքը թողեր ու մեկնե՞ր է: Եթէ թողեր ու մեկնե՞ր է, յաջողութիւնք աներկեւան են և անտարակուսելի: Կարելի է՝ աստանօր ամիսիկէլ այն բոլոր զրոյցներ և աւանդութիւններ որք կը վկայան ցայսօր առ աւանդիս: Ի վերջին աւուր պահոցն շատ անգամ հետեւեալը կը լուրի պառաւ մամերէ՝ որք հարսնցու ունին աղջիկ:

Սուրբ Սարգիս,

Բռնէ գօտիս,

Տուն ու երգիք

Առնուն լուսիկ:

Սուրբ Սարգիս,

Բռնէ գօտիս,

Տուր զաւակիս

Սիրականիս

Արեւ փեայ,

Անուշ կաղա (1),

Աղւոր քաւոր

Քաջ ձիււոր:

ՎԱՀԱՆ Վ. ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ

(1) Տեսակ մը համեմ խմորուն:

ԱՐՁԱԿ ԺԱՆԵԱՆ

ԿՕՇԿԱԿԱՐ

11, Պահնէ-Գաբու, 11

Պատրաստ կը գտնուին և յանձնարարութեամբ կը շինուին արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ կօշիկներ:

Խնամեալ ապրանք

ԽԻՍՏ ԶԱՓԱԽՈՐ ԳԻՆԵՐԸ

8—8



ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանին հրամանաւ մայրաքաղաքս գալու համար ճամբայ ելած են Մշոյ կողմը բնակող ձերանը Աշիւթիին ցեղապետներէն 17 զինակիրք և 80 ձիււորք:

— Հաստատուած լինելով որ Ոստիկանութեան Դրան բանտին մէջ բազմաթիւ բանտարկեալք կան որք ցարդ վճիռ մը չեն ըստացած, Բարձր. Մեծ-Եպարքոսը գրած է Արդարութեան նախարարութեան՝ փութացնել այդ կարգի անձանց դատաւարութիւնը: Արդարութեան նախարարութիւնն ալ ծանուցած է որոց որ անկ է թէ պատասխանատու պիտի մնան այն պաշտօնեայք, որք պատճառ կը լինին այդ կարգի բանտարկեալք երկար ժամանակ առանց դատաստանի մնալուն:

— Ասիական երկաթուղեաց ընկերութեան կողմանէ՝ մայրաքաղաքիս մօտ եղող տեղերու համար փոխադրութեանց սակագինը աւելցնելու առաջարկութիւնը չէ ընդունուած Հանրագումար շինութեանց նախարարութեանէն:

— Հէքքեարի գաւառին Աղբակ գաւառակին նախնական դատարանի անդամներէն Տէրվիշ էֆ. դատաստանի ենթարկուած է՝ կաշառակերութեան պատճառաւ:

— Մարտիկարակ Պ. էթիէն Զաֆիրօբուլօ 8000 ոսկի, իսկ Պ. Պ. Բօլ Սէէֆանօվիչ և Նիքօլա Զարիֆի 1000ական ոսկի նըւիրած են ի նպաստ Բերայի Յունաց աղջկանց վարժարանի:

— Սպարապետի Դուռը հրահանգ զրկած է բոլոր զօրաբանակաց հրամանատարներուն, որպէս զի ժողովրդէն որու քով որ Մարթիներ հրացաններ կը գտնուին, մինչև վեց ամիս յանձնեն տեղական կառավարութեանց, որք եթէ յանձնուած զէնքը գործածութեան յարմար է՝ փոխարէն մէկ օսմ. ոսկի պիտի տան զէնքը յանձնողին, որ միանգամայն որ և է պատիժէ ազատ պիտի մնայ: Այս պայմանաժամէն յետոյ որոց քով որ այդ հրացաններէն գտնուին, պատժոյ պիտի ենթարկին:

— Տպագրական Տեսչութիւնը պաշտօնապէս կը հաղորդէ լրագրաց թէ Ասիական Թուրքիոյ զանազան գաւառաց մէջ կատարեալ անդորրութիւն կը տիրէ:

— Հազիբաք կը գրէ թէ Կարնոյ բանտին մէջ գտնուող բանտարկեալք ոմանք Պետական Խորհրդոյ նախագահին աղբրագիր մը զրկելով և յայտնելով որ իրենց ընթացքն ուղղած են, ներումն խնդրած են: Այս աղբրագիրը ըստ օրինի յանձնուեր է Արդարութեան նախարարութեան:

— Որոշուած է Թուրքիոյ արտադրութիւններն ընդարձակ սահմանի մը մէջ ներկայացնել Զիքալոյի ցուցահանդիսին մէջ: Միացեալ Նահանգաց մէջ կազմուած զօրաւոր ընկերութիւն մը՝ գործակալութիւն մը պիտի հաստատէ ի Կ. Պոլիս, ինչպէս նաև Եւրոպիոյ մեծ քաղաքաց մէջ, ուղեւորաց երթեւեկի դիւրութիւններ ընծայելու համար:

— Մուտանիա — Պրուսայի գծին ու նիւթեղինաց վերանորոգման համար 1,300.000 ֆր. ծախք հաշուուած է: Աշխատութիւնը, որ երեք ամիս պիտի տեւեն, պիտի սկսին ապրիլի 1ին:

— Կարնոյ Խնուս գաւառակին մէջ երկու կանգունէ աւելի ձիւն տեղացեր է:

— Ատանայի Բալաս գաւառակին գայմագամ անուանեցաւ Նուրի էֆ, գայմագամ Պէրկամայի: — Այսօրն Պէրկամա գաւառի

գայմագամ անուանեցաւ Նիգամէտտին պէյ, գայմագամ Սանտրըղլի: — Պրուսայի Սանտրըղլը գաւառակին գայմագամ անուանեցաւ Սատտ պէյ, նախկին չրջանաւարտ Միլիթէ վարժարանին: — Սանիյէի Բ. աստիճան տըրուեցաւ Կիւմլիսանէ գաւառին թղթակցութեանց տնօրէն Նաման Սայիպ էֆէնտիի: — Սալիսէի աստիճան՝ Ոստիկանութեան վարչական յանձնաժողովին պաշտօնեայներէն Պիւրհանէտտին էֆէնտիի:

— Զմիւռնիոյ առեւտրական դասն՝ այդքաղաքն Քօնեայի միացնող երկաթուղեոյ մը շինութեան արտօնութիւն խնդրած է Կայս. պալատէն:

— 1304 տարւոյն մէջ 953450 ոսկւոյ խահուէ ներմուծուած է ի Թուրքիա, մինչ 538940 ոսկւոյ միայն արտածուած է:

— Վեհ. Սուլթանը հրամայած լինելով որ զինուորաց համար հարկ եղած հագուստները Թուրքիոյ մէջ գործուած կտաւներով շինուին, Սպարապետի Դուռը Ալանա կոչուած կտաւէն 2000 ծրարի յանձնարարութիւն մ'ըրած է ի Մաղնիսա: Տեղւոյն գործարանը, որ եւրոպական կտաւներու մրցման չը դիմանալով՝ անգործութեան մատնուած էին, այժմ գործի սկսած են:

— Պաշտօնապէս հրատարակեալ վիճակագրոյ մը համաձայն, որ մատուցուած է Վեհ. Սուլթանին, 1305 տարւոյ մարտի սկիզբէն մինչև փետրվարի վերջ, մայրաքաղաքիս, չըրջակայից, 25 նահանգաց և չորս գաւառաց մէջ 43.918 շէնքեր ի նորոյ կառուցուած են, 20 042 շէնքեր՝ նորոգուած, 5499 շէնքեր՝ այրած, և 10.204 շէնքեր փլցուած են:

— Սերաստիոյ ժողովուրդն յանձն առած է կատարել Սամսոնէն ի Սերաստիա շինուելիք երկաթուղեոյն նախնական աշխատութիւնները: Սամսոնի բնակիչք նոյն աշխատութեան փոխարէն յանձն առած են իւրաքանչիւր մարդու համար վճարել 50 զրուշ, իսկ միւս գաւառակաց բնակիչք՝ 30ական զշ:

— Ծանուցիւք թէ Դ. զօրաբանակի դեղագործներէն Եօրկաքի էֆ. հիւժախտի դրամանան համար դեղ մը գտած էր: Այժմ կը ծանուցուի թէ ի Սելանիկ Րիֆաթ էֆ. առնուն բժիշկ մ'ես դեղ մը գտած է հիւժախտի դրամանան համար: Րիֆաթ էֆ. մայրաքաղաքս պիտի գայ՝ բժշկական վարչութեան ներկայացնելու համար իւր դեղն որ Րիֆաթիկ կը կոչուի:

— Գերմանիոյ կայսեր քոյր Վիլհելմին իշխանուհին, որ երկու օրէ ի վեր մայրաքաղաքս կը գտնուէր, հինգշաբթի գիշեր արեւելեան ձեպընթաց կառախմբով մեկնեցաւ:

— Նախորդ խտիվ իսմայիլ փաշա էմիրիէնի պալատէն իւր բնակութիւնը ի մօտոյ պիտի փոխադրէ ի Սուլթան Պայագիտ, Զէյնէպ Հանըմի ապարանքն որ Վեհ. Սուլթանին կողմէ շնորհուած է Ն. Բարձրութեան:

— Ոստիկանութեան նախարարութեան կարգադրութեամբ, պանդոկներու և վարձու բնակարանաց տէրերը այսուհետև պարտաւոր պիտի լինին իրենց թաղին ոստիկանատան հաղորդել իրենց հիւրընկալած օտարականներու անունը, արուեստը, ուղեւորութեան շարժառիթն և այլ մանրամասնութիւնները:

— Դաւաթիոյ Պորսային մէջ Բէթիի ընկերութեան բաժնեթղթոց վրայ ևս գործառնութիւնը պիտի կատարուին այսուհետև:

— Կայսերական հրամանաւ պիտի գնուի Վսեմ. Արրահամ փաշայի ի Պէյքօզ ունեցած ագարակն և տիպար-ագարակի պիտի վերածուի:

— Հէքքեարիի գաւառին 1303 տարւոյ հասոյթէն թղթատարով ելմտական գանձը զրկուած 18,600 զրուշը՝ թղթատուէնէ ելմտական գանձը փոխադրուած միջոցին 10 000 զրուշը անյայտացած լինելով, քննութիւն բացուած է:

— Կեսարիոյ գաւառին հաշուակալ անուանեցաւ Ապտիւլ-Գատէր Էֆէնտի, նախորդ հաշուակալ Արզընի:

— Կարինէն 18 ժամ հեռի գտնուող Սպեր գաւառակին մէջ պահարկստ երեւան երեւելով, 6000էն աւելի անասունք զոհ գնացած են:

— Զմիւռնիոյ առեւտրական սենեակը նըկատելով որ Գոնեսայի երկաթուղւոյ գծին՝ Այտընի գծին հետ չը միանալը և մինչև Մուտանիա երկարիլը մեծ վնաս պիտի պատճառէ Այտընի նահանգին և ի մասնաւորի Զմիւռնիոյ առեւտրին, աղերսագրով մը խնդրած է Այտընի կուսակալէն որ Զմիւռնիոյ առեւտրական շահերը պաշտպանուին: Զմիւռնիաբնակ եւրոպացի վաճառականաց կողմանէ այս նպատակաւ 150 ստորագրութեամբ հանրագիր մը մատուցուած է առ Վէհ: Սուլթանն:

— Կաթոլիկ ազգայնոց Պատրիարքարանը վերջերս իւր հասարակութեան մէջ լատինական տումարը գործադրել տալ ձեռնարկած, և սակայն այս տնօրէնութեան դէմ տրանջանաց ձայներ լսուած լինելով, ձերիսէի Շարգիլէն կ'իմանամք թէ Պատրիարքարանը ըստ իրաւունքի է դադարեցնել սոյն տնօրէնութեան գործադրութիւնը:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ անգամ կողկասէն եկած նամակներէ տեղեկանալով ծանուցինք էջմիածնայ Գահակալ Տ. Մակար Սրբազանի հիւանդութիւնը, զոր կը հաստատէին երկուշաբթի օր Թիֆլիսէն ստացուած լրագիրք: Ձերիսէի Շարգիլէի Պաթումի թղթակիցն ևս չորեքշաբթի օր արձագանգ կուտար այս լրոյն: Բայց ահա երեքշաբթի օր Պատրիարքական Փոխանորդ Հայրն՝ հրամանաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր՝ հեռագրելով ի Ս. Էջմիածին և այս մասին տեղեկութիւն հարցնելով, յաջորդօրն ի պատասխանի կը հեռագրուի ի Պատրիարքարան թէ Տ. Մակար Սրբազան սղջ առողջ է:

— Եգիպտոսէն կը գրեն ի Պոլիս թէ, տեղւոյն Գաւառ. Ժողովը վերջին նստին մէջ եւս չէ ընդունած՝ իրենց սիրեցեալ Աւաջնորդին՝ Իզմիրլեան Գեր. Տ. Մատթէոս Սըրբազանի հրաժարականը, և որոշած է վերջին գիմումմալ ընել նորին Գերապատուութեան, խնդրելով որ՝ հրաժարագիրն ետ առնու, և և յօդափոխութեան մնայ ի Պոլիս, մինչեւ ցատաքինումն իւր հիւանդութեան:

Միւս կողմանէ կը լսեմք թէ, երբ Գեր. Սրբ. Նար-Պէյ Սրբազանի Պատր. Փոխանորդութեան ընտրութիւնն ի լրագիրս կարգացուեր է յեղիպոս և յԱղէքսանդրիա, ի Պոլիս գրած և խնդրած են որպէս զի Գեր. Տ. Գարեգին Մ. վարդապետ Թաթարեանը կոչուի յայդ պաշտօն:

— Երկուշաբթի առուր Կրօն. Ժողովը փլունապուրկ ըրաւ Տիգրանակերտցի քահանայ մ'որ ասօրէն պոսակ մը կատարած է:

— Նոյն առուր Կրօն. Ժողովոյ ներկայացաւ յոյն աղջիկ մը և Հայաստանեայց Եկեղեցւոյ ծոցը մանկու փափագ յայտնեց, Ժողովը Փոխանորդարանին յղեց խնդիրն՝ ի պարտ ու պատճառ անօրէնութիւն:

— Գոհութեամբ կը լսեմք թէ Ազնուաշուք Էփեսեան եղբարք յանձն առած են՝ 3000 կանգուն տարածութիւն ունեցող արգիլ գետինի վրայ վերաշինել Բերայի Ս. Յարութիւն եկեղեցին ու նորեկեան երկսեւ վարժարանը:

— Մայր եկեղեցւոյ երեսնամեայ լուսարարապետ և տասնամեայ Աւագերէց Տ. Սիւրիան Աւագ-Քահանայն վախճանելով հինգշաբթի առաւօտ, երէկ օծման և յուզարկաւորութեան հանգէսը կատարուեցաւ ի Մայր Եկեղեցւոյ:

Պատարագին էր՝ Գեր. Տ. Գրիգորիս Ս. Արքեպիսկոպոս Յովհաննէսեան, որ միանգամայն օծումն կատարեց և դամբանախօսեց, հանգուցելոյն բարեմասնութիւններն ի վեր բերելով:

Յուզարկաւորութեան մասնակցեցան՝ Գեր. Տ. Սիմէօն Ս. Սէֆէրեան, Գեր. Տ. Գրիգորիս Ս. Ալէքսանդրեան, Գեր. Տ. Գարեգին Ս. Սրուանձտեանց, 10 էն աւելի վարդապետք, և 40 ի մօտ քահանայք:

Մարմինը Պալլադի գերեզմանատունը փոխադրուելով, անդ ամփոփուեցաւ:

— Բերայի Տէր Գարեգին քահանայ Տէր Մարտիրոսեան, որ Ֆէրի գիւղի եկեղեցւոյն մէջ կը պաշտօնավարէր, գիր մը ղրկելով առ Քարգիլէն և դաս քահանայից Բերայի, յայտարարած է թէ Բողոքականաց Մկրտիչեան աղանդին յարած է, քանի որ Հայաստանեայց եկեղեցին չը թոյլատրէր քահանայի մը կրկին ամուսնութիւնն՝ յետ մահու երէցինոյ: Կրօն. Ժողովը իւր վերջին նստին մէջ Ամեն. Ս. Պատրիարք Հօր յանձնեց՝ այս մասին հարկ եղած տնօրէնութիւնն ընել ըստ կանոնաց Եկեղեցւոյ:

— Հրատարակուեցաւ «Մարիկ Մանկանց» կրթական հանդիսի 7րդ թիւը: Կը պարունակէ բաց ի նախորդ թիւերով սկսուած Դասընթացներու շարունակութենէն, Պ. Բարոյի «Մանկավարժութեան Պատմութիւն» և Կարեւոր գործին թարգմանութիւնն ևս, որոյ շարունակութիւնը պիտի երևի յաջորդ թիւոց մէջ:

Մեզ կը գրեն.

«Ժամանակէ մ' իվեր Եւրոպայի շահախնդիրք մեր մօտակոյ գիւղօրէից խաղողներէն գինիներ շինելով՝ օտար երկիրներ կը ղրկեն, և յաճախ տարրազարգութեան մ'ենթարկելով զայն, մեզ կը վերադարձնեն անհամեմատ գիներով: Գոհութեամբ կ'աւետեմք որ Հայազգի փորձառու մասնագէտ մը՝ Յակոբ Էֆէնտի Սուքիասեան՝ մեծ ջանք յաջողած է վերոյիշեալ խաղողներէն զուտ գինիներ արտադրել, որք Հայ արուեստագիտութեան պատիւ բերելով հանդերձ, դիւրագին քաջաւորութիւն կը պարգևեն մեզ, մինչդեռ ցարք կ'աղաւթենք մեր քսակն այլոց ձեռքը պարսկելով՝ ստամոքսի բորբոքումներ պատճառող ալքոլային խառնուրդներ գնել:»

Հ Ր Ա Ի Է Ր

Տիար Սարգիս Միրաքեան, դեղագործ ի Պալի Բաշա, պատիւ ունի հրաւիրել իւր բոլոր բարեկամներն՝ Ազն. Օր. Աննի Տուկլասի հետ իւր պաակագրութեան հանդիսին, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ երկուշաբթի, ի ժամ 4, ի Մայր Եկեղեցւոյ Գոմ-Գարուի:

Մէծէլլէի Ա.Տ.Ք.Ա.Մ.Մ. Ա.Տ.Ք.Ա.Մ. Օսմանեան Բաղաւաղին Օրինագիրք. Հատոր Բ, Թարգ. Նիկողայոս Թովմայեան: Մնացեալ 3 հատորք ևս հետզհետէ պիտի հրատարակուին անընդհատաբար: Ա. և Բ. հատորք կը վաճառին 10 ալան զրոյ: Կեդրոնատեղին է Բ. Մ. Պողոսեան գրատունը, Չափմագէշլար, փռան կից, թիւ 59:

ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ Նոր Դասագիրք. Տեսական և Գործնական. Աշխատասիրեաց Յ. Գ. Փալագաշեան. Մանկավարժական նոր և դիւրուայց եղանակաւ և պարզ ու դիւրամոռնելի ապացուցութեամբ պատրաստուած. կը բաժնուի երեք մասերու:

ՄԱՍՆ Ա. — Չորս գործողութիւն ամբողջ թուոց, 650 ի մօտ հրահանգներով և գործնական խնդիրներով, Բ. տպագրութիւն բարեփոխեալ և ճշմարտեալ. 4 զրոյ:

ՄԱՍՆ Բ. — Չափք, կշիւք և դրամք. Տասնորդական կոտորակք. Յատկութիւնք թուոց. Հասարակ կոտորակք. Թուրքիոյ հին և նոր չափուց և կշուց բաղդատութիւն. Նոյն չափուց և կշուց գիններուն բաղդատութիւնը. մօտ 500 հրահանգք և գործնական խնդիրք. Աղիւսակք. 4 զրոյ:

Ա. Բ. ՄԱՍՈՒՆՔ միասին կազմուած 7 1/2 զրոյ ՄԱՍՆ Գ. — (Մամոյ ներքեւ)

Կեդրոնատեղին է Ուղուն Չարըր-պաշը թիւ 402, Փորագրիչ Երուանդ Էֆ. Փալագաշեանի խանութը:

ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ երեքլեզուեան Անգլ. Հալ և Հայաստ. քրեւելն, հանդերձ արտասանութեամբ, սկսած է հրատարակուիլ թերթառ թերթ: Պիտի բաղկանայ 70 թերթերէ 1120 էջերով և պիտի պարունակէ առաւել քան 30 000 բառ: Բաժանորդագիրն է 35 զրոյ: Ամբողջանալէ յետոյ՝ 50 զրոյ: Դիմել Մարգարեան և Պողոսեան գրատունները:



ՄԵՍ ՎԱՅԱՌԱՍՈՒՆ ԹԵՅԻ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԵԱՆ ԸՆԿ. Կ. Պոլիս, Պանկ Դաբու, ձէլալ պէյ խան քիւ 10

Սոյն հանրածանօթ վաճառատուն ձեռուան առթիւ Ճափայէն բերել տուած է զանազան տեսակ աղիւ և ընտիր թէյեր, ինչպէս նաեւ այլ և այլ մեծութեամբ ու ձևերով նկարազարդ առփեր որք կաղանդի առթիւ կրնան իրել նուէր ծառայել: Գինները որոշ և չափաւոր: Յանձնարարութիւնք փորձով և ճշգրտութեամբ կը կատարուին: 7—8

Ա Ր Ժ Է Բ Գ Ր Ա Մ Ո Յ			
Օսմ. իւրան 100 զրոյ էն			
Մէծիալիք	108 17	Արծ. ձիւթ. (6 հատ)	82
Մէթալիք	101	Բաւարի բօլ	90 5
Պէշիք, Ալթըլըք	103	Նարոյլոն	87 13
Քաւորդ մէճիւ	107 20	Գրեմիլ	51 40
Մանր մէճիւ	102 20	Աղաղ լիւրա	110 6
Մանր թղթագրած 7 1/4			
Գոնալիտէ (երկղւոյ)	21	Իււմ. երկ. բաժին	78
Նոր փոխ. 4 ռո		Թաւալիք (մանր)	21 40
(Թաւալիք Օսմ.)	83	Թաւալիք (մեծ)	21

ԱՐՏՕՆԱՏԻՐ Ա. ՍԱԳԱՆԱՆ ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ